

**Հայաստանի ԱԳՆ աշխատանքը տեղեկատվական պատերազմների
մարտահրավերների պայմաններում**

18 դեկտեմբերի 2008

Հարգարժան հյուրեր,
Տիկնայք եւ պարոնայք,

Նախ եւ առաջ ցանկանում եմ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության անունից սրտանց շնորհավորել Արմենայրեսի աշխատակազմին գործակալության 90-ամյակի կապակցությամբ, մաղթել նորանոր ձեռքբերումներ, տեղեկատվական նոր հաղթանակներ:

Մեր դարաշրջանում տեղեկատվությունը, թերեւս, ամենապահանջվածն ու փնտրվողն է:

Չարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների այս ժամանակաշրջանում, կարծես թե, պակաս չկա աղբյուրների, մեկնաբանությունների եւ տարաբնույթ տեղեկատվական այլ նյութերի: Միաժամանակ այս նյութի առատության պայմաններում, բավականին դժվար է իրարից գատել ճշմարիտն ու սուտը, իրականն ու կեղծը՝ ճիշտ կողմնորոշվելու եւ որոշումներ կայացնելու համար:

Այս առումով ԱԳՆ-ում մշակվել եւ իրականացվում է տեղեկատվության ստացման եւ հրապարակման միասնական եւ կենտրոնացված համակարգ:

Ինչում է դա կայանում. ցանկացած տեղեկատվություն մեկնաբանվելուց կամ հրապարակվելուց առաջ պետք է ստուգվի, ճշտվի դրա համապատասխանությունը իրականությանը, ապա տարբեր ստորաբաժանումների եւ արտերկրում մեր ներկայացուցչությունների, անհրաժեշտության դեպքում այլ գերատեսչությունների հետ համագործակցաբար կազմվի պատասխան կամ դիրքորոշում, եւ միայն դրանից հետո այն հրապարակվի:

Մենք ընտրել ենք այս գործելաճճը, քանի որ համոզված ենք, որ միայն իրական տեղեկատվությունն ունի ուժ, իսկ կեղծը՝ վաղ թե ուշ կբացահայտվի եւ կեղծ տեղեկատվության հեղինակն այլեւս վստահելի չի լինի գործընկերների շրջանում: Այս իրականությունը հատկապես կիրառելի է միջպետական հարաբերություններում, որը ԱԳՆ նախարարության գործունեության ոլորտն է:

Ինչպես նշեցի, տեղեկատվական բնագավառում արտգործնախարարության եւ արտերկրում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատանքը կրում է կենտրոնացված բնույթ, եւ մեր աշխատանքում մենք մեծ տեղ ենք հատկացնում հենց տեղեկատվական տեխնոլոգիաներին:

Նախարարության թողարկած տեղեկատվությունը երկու լեզվով տեղադրվում է ԱԳՆ կայքում, եւ ուղարկվում տարբեր խմբերի բաժանված հասցեատերերի՝ տեղական լրատվամիջոցներ, օտարերկրյա լրատվամիջոցներ, տարբեր միջազգային կազմակերպություններում եւ այլ երկրների ԱԳՆ-ներում Հայաստանի պատասխանատուներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններ եւ այլն: Այս տարվա գարնանից արգործնախարարությունը սկսեց տեղեկատվությունն առաքել նաեւ Հայաստանի մարզերում գործող

լրատվամիջոցներին, ինչի շնորհիվ մարզերում եւս առավել մանրամասն է լուսաբանվում մեր երկրի արտաքին քաղաքականությունը:

Հանրապետությունում արտգործնախարարությունն առաջինն էր, որ իր կայքում տեղադրում է տեսա եւ աուդիո նյութեր, մասնավորապես բոլոր ասուլիսների եւ հարցազրույցների ձայնագրությունները հասանելի են մեր կայքէջում, օտարերկրյա ուղեւորությունների տեսանյութերը եւս տեղադրված են կայքի հատուկ բաժնում եւ հասանելի բոլոր հեռարձակող ընկերությունների համար: Մենք ակտիվորեն օգտագործում ենք նաեւ Youtube կայքի հնարավորությունները եւ այնտեղ տեղադրում նախարարության գործունեությանը վերաբերող նյութեր: Շուտով պատրաստ կլինի ԱԳՆ նոր, եռալեզու կայքէջը, որը առավել մատչելի կդարձնի այնտեղ գետեղված նյութերի օգտագործումը:

ԱԳՆ-ն նաեւ զբաղվում է աշխարհի եւ տարածաշրջանի վերաբերյալ պետական կառավարման մարմինների տեղեկատվական ապահովմամբ՝ ամենօրյա ռեժիմով նրանց ուղարկելով տարբեր տեսակի լրաքաղեր եւ մամլո տեսություններ:

Տեղեկատվական պատերազմների մարտահրավերներին դիմակայելու համար կարեւոր է կոնկրետ հասցեատիրոջը ժամանակին եւ ճշգրիտ ինֆորմացիա տրամադրել եւ այդ առումով մենք, գնահատելով մեր խոսքի արժեքը, չենք փորձում հերքել կամ մեկնաբանել յուրաքանչյուր անհեթեթ հայտարարություն կամ մեղադրանք՝ փորձելով գործով ցույց տալ իրականությունը կամ կատարված աշխատանքը:

Բերեն ընդամենը մեկ օրինակ. մամուլում գրվեց, որ Հայաստանը ոչինչ չի անում ի նշանավորումն Յեղասպանության ոճրի կանխարգելման եւ պատժման մասին կոնվենցիայի 60-ամյակի: Ընդամենը մի քանի օր հետո Հելսինկիում տեղի ունեցած ԵԱՀԿ անդամ երկրների արտգործնախարարների խորհուրդն ընդունեց համապատասխան հռչակագիր՝ «Նախարարական հռչակագիր Յեղասպանության ոճրի կանխարգելման եւ պատժման վերաբերյալ կոնվենցիայի 60-ամյակի վերաբերյալ»: Հելսինկիում 56 երկրների ԱԳ նախարարների կողմից ընդունված 11 փաստաթղթերից դա միակ հռչակագիրն էր, այն էլ ընդունված Հայաստանի առաջարկությամբ:

Տեղեկատվական պատերազմների մարտահրավերները շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար առավել ցայտուն են, եւ մենք տեղեկատվական անվտանգության լուրջ խնդրի առաջ ենք կանգնած: Մեր հարեւանները պարբերաբար խեղաթյուրված, հաճախ էլ ամենեւին իրականության հետ որեւէ կապ չունեցող լուրեր են տարածում՝ երբեմն ակնկալելով նաեւ հայկական կողմի արձագանքը: Բայց Հայաստանն առաջնորդվում է տարածաշրջանում համերաշխության, անվտանգության եւ համագործակցության սկզբունքներով, այդ պատճառով էլ հաճախ նախընտրում է տեղեկատվական պատերազմ հրահրած իր հարեւաններին հակազդել գործով:

Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի գերակայություններից մեկը տեղեկատվական անվտանգության մեխանիզմների մշակումն ու իրականացումն է: Համակարգված, ազգային շահերից բխող եւ դրանք պաշտպանող տեղեկավտության սփռումն այսօր այժմեական է, քան երբեւէ, եւ արտգործնախարարությունը պատրաստ է այս հարցում համագործակցել բոլոր շահագրգիռ լրատվամիջոցների եւ կազմակերպությունների հետ՝ մեր արտաքին քաղաքականության առջեւ ծառայած խնդիրները եւ դրանց լուծման ուղիները հանրությանն առավել մատչելի դարձնելու համար:

Թույլ տվեք Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության անունից ողջունել «Արմենպրես» լրատվական գործակալության 90-ամյակին նվիրված

«Տեղեկատվական պատերազմներ» միջազգային գիտաժողովի մասնակիցներին,
մաղթելով նորանոր մասնագիտական հաջողություններ:

Շնորհակալություն: